դքննութիւնն չիյնելով երբէք ՚ի գրի անդ զպակաս տեղիս Հայոց, և տայ Հէօճճէթ Ծունաց՝ զոր առեալ Մոճաքեանն և ձարտարապետն մեկնեցան յերուսաղէմ։

Կուսակալն Դամասկոսի ոչ կամեցաւ ինքնին ելանել յայցելութիւն գաւառին և գալ յերուսաղէմ ըստ սովորութեան, այլ հրամայեաց Ապուլօպութ Մէհէմմէտ աղային՝ որ եկեալ եմուտ յերուսաղէմ 3000 զօրօք և մեծ հանդիսիւ (՚ի 29 Հոկտեմբերի)։ և զկնի միոյ ամսոյ մեկնեցաւ ՚ի Քերբոն։ Նախ քան զգալուստ սորա եկն հրաման սաստիկ ՚ի կուսակալէն Դամասկոսի՝ ձեռամբ Ալի աղային՝ որ նստէր յԱքքէ՝ առ քաղաքապետն երուսաղէմի, կարգեալ ինքն ոստիկան՝ զի հատուսցեն Հայք իբրեւ պարգեւ կուսակալին 400 քսակս արծաթոյ առանց ինչ յայտնելոյ ումեք, և քաղաքապետն ոստիկէր զվանականս, և ՚ի յայտնել նոցա զաղքատութիւնս իւրեանց՝ ասէ, եթէ աղքատ էք, ընդէ՞ր բնակիք յայդպիսի վայելուչ տեղիս՝ թողէք զայն այլոց՝ որք կարող են կատարել զկամս կուսակալին, և յետ բազմադիմի աղաչանաց և պաղատանաց և կրկնոյ զնախասանին՝ հազիւ ուրեմն կարացին տալ ընդունել 300 քսակս միայն Բգեչխին, զի Յոյնք տուեալ էին 500 քսակս, և յետ այնորիկ պահանջէր 18000 դահեկան իբր պաշար պահապան զօրաց քաղաքին, զոր բազում նեղութեամբ կարացին հերքել։ և միաբանք դեղերելով ՚ի քաղաքն ժողովեցին տոկոսիւք դրամս կրելով զանտանելի տառապանս, և հատուցին զոր պահանջէրն, որոց ամբողջ գումարն եղեւ 194,475 դահեկան, որպէս գրէ զայսոսիկ Թէոդորոս Պատրիարք ՚ի նամակին իւրում ողբալով և կոծելով զթշուառ վիճակ ծերութեան իւրոյ։ և զի գլխաւորք ազգին սաստէին նմա չառաքել փոխանակադիրս ՚ի վերայ նոցա, որոյ վասն կայր պաշարեալ ՚ի տարակուսանս (՚ի 5 Դեկտեմբերի)։

Եփրեմ եպիսկոպոս մեկնեալ ՚ի սահմանաց Իւուսաց եհաս ՚ի Տփղիս՝ և առեալ ընդ իւր զմկրտիչ վարդապետ Մեղրիկ կոչեցեալ, որ նստէր անդ ՚ի գործ Նուիրակութեան Երուսաղէմի, եկն ՚ի Ս. Էջմիածին, եւ օծեալ կաթուղիկոս մեծահանդէս փառաւք, նստաւ յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց (1810· ՚ի 6 Նոյեմբերի)։ Դրեցին առ նա գիր շնորհաւորութեան Ամիրայք կոստանդինուպոլսոյ, և